



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջօրէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցիտով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաւաբանները բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՐԱՆՈՒՄ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻԹԻՒՆ

Անմահական տօնը.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լոյսնաբան գրողը.
Արտաքին լուրեր.—ՆԵՌԱՅԻՆԻԹԻՒՆ. — ՅԱՅՏԱՆ-
ԲԱՐՈՒԹԻՒՆԵՐԸ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր հո-
գեւոր հաստատութիւնների շուրջը.

ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ՏՕՆԸ

Երէկ, փետրվարի 19-ին, «Մշակ» լոյս
ը տեսաւ սովորականի պէս և մենք չէ
կարողացանք ողջունել այն նշանաւոր տա-
րեկաբէր, որ լրացաւ այդ օրը:

Երէկ ձորերի ազատութեան քառաս-
նամյա տարեկարծն էր: Քառասուն տա-
րի անցաւ այն օրից, երբ Ալեքսանդր II
կայսրի մի խօսքով միջոցաւոր գիւղացիներ
ազատվեցան դարաւոր ստրկութեան շղ-
թանից: Եւ այսօր քառասուն տարի է,
ինչ ժողովրդական մասան Ռուսաստա-
նում ազատ է, իր աշխատանքի, իր կեան-
քի ու սեփականութեան տէրն է:

Հոկտեմբերի այդ գործը, որ կատարեց
Ալեքսանդր II և որի համար ստացաւ Ա-
զատարար Թագաւորի յաւիտենական ա-
նունը, Ռուսաստանի նորագոյն պատմու-
թեան ամենագեղեցիկ դարձն է կազմում:
1861 թ. Երանդի—դա այն դարաշրջանն է,
երբ ռուս ժողովրդի առաջ բացվում են
բարորդութեան լայնածաւալ Տօրիքները:
ձորերի ազատութեան հետեւեցին մի
շարք խոշոր օրէնսդրութիւններ. ստեղծվեց
նոր, արդար, հրապարակական դատաստան,
ժողովրդի շնորհից զեմստովի ինքնավար-
ութիւնը, զինորդագրութիւնը ընդհանուր
դարձաւ, մամուլը ստացաւ մի շարք նշա-
նաւոր արտօնութիւններ: Պետական և
հասարակական կենսքը առաջ գնացաւ աւել-
ի ուժեղացած, աւելի կենտրոնակ դար-
ձաւ: Նոր օրեր լուսայան Ռուսաստանի
համար. գրականութիւնը ծաղկեց, և
վաթնական թուականների անունը այ-
ժմ էլ հիացմունք և պատկանանք է աղ-
բուն:

Այդ անունը հաստատապէս թանգ է
Ռուսաստանում ապրող բոլոր աղքատ հա-

մար: Դա վերածնութեան և առաջադի-
մութեան մի նշանաւոր շրջան էր, որ բա-
րեւորեց ամենքին, որից բաժին ստացան
այն բոլոր տարրերը, որոնք ապրելու և
կատարելագործվելու ընդունակութիւն ու-
նեն:

Վաթնական թուականների արշալոյսը
ծագեց 1861 թ. փետրվարի 19-ին. դիւ-
ղացիների ազատութիւնը ամենից առաջ
էր: Եւ դա հասկանալի էր. նախ հարկա-
ւոր էր ազատ ժողովուրդ, որպէս զի կա-
րելի լինէր այնուհետեւ կենդանարար ըն-
թորմներ շնորհել նրան: Ահա այդ նշանա-
ւոր սկզբնաւորութեան քառասունամեակն
էր, որ երէկ միանման գեղեցիկ յիշատակ-
ներ վարժեցրեց լայնածաւալ Ռուսաստանի
բոլոր անկիւններում:

Մենք էլ խորին պատկառանքով միա-
նում ենք այդ անմահական տօնին մատու-
ցած մեծարանքներին: Այդ տօնի գեղեցիկ
սկզբունքները միշտ կը մնան փայլուն,
խրախուսական, առաջնորդող աստղեր կը
լինեն Ռուսաստանի յաւաքոյն գործիչների
համար, ցոյց տալով նրանց ժողովրդի բա-
րեւորը, ահագին պետութեան շահերը և
մեր ընդհանուր հայրենիքի բարորդութեան
պահանջները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մենք առիթ ունեցանք տեսնելու Գիւտ ա-
ւազ քահանայ Աղանեանցի «Լույս» ժողովա-
ծուի այս տարվայ առաջին գրքը: Ինչպէս և
միշտ, դա այս անգամ էլ մի «չտեսնարան»
է պիտանի, բայց մանաւանդ անպիտան գիտե-
լեաց: Մի շատ դուարձալի հանգամանք, որ
ունի ներկայ գրքը, այն է, որ Գիւտ քահա-
նան այդ տէրտէրական «Թորքային» այժմ
կայքից է հրապարակաւ փետուրներ էլ...
«Թորքան» դուրս է եկել շատ ուժած, փրկած:
Ինչպէս է, որ նա կարողանում է առանց
պատուվել պահել իր մէջ այնքան անեղ ձա-
յներ: Երեւակայեցէ՛ք: Երեւակի Նիկողայոս Գա-
րամանը Շլիմբերդէի անհորձ կոմպիլի-
տօրից այստեղ դարձել է մի շատ բարկացած,

ծուլ-ծուլ եղող մարդ, որ իր մաղերն է փե-
տում: Բայց կայ աւելին. նոյն իսկ ցիլիքա-
ւոր տիրացու Արշակ Տէր-Միքէլեանը իր առ-
տուածաբանական դառնացանքների մէջ ինչ-որ
քրթական անհասկանալի, բայց ըստ երեւոյթի
թուով բաներ է արտասանում «Մշակ» դէմ:

«Այդ ինչ չիօթ, ինչ աղմուկ, յուսակտուր
վայ ու լաց
Առհասարակ տիրել է տարաբարձի զաւա-
կաց»

Ի՞նչ է պատահել.—Մի շարք սոսկալի դէպ-
քեր: Հրապարակով հաստատվեց թէ տգիտու-
թեան ինչ վիթխարի պատկեր է ներկայացնում
երեւելի Նիկողայոս Գարամանը իրեն վիթա-
ղալովի դառնագրքի թարգմանիչ, իրեն հայե-
րէն լեզուին տեղեակ համարող մարդ: Յետոյ
գաւթ է այն, որ Արիստակէս եպիսկոպոս Սեդ-
րակեան հրատարակեց իր «Քահանայական
կնիքը» և այդ գրքը մեծ տպաւորութիւն
գործեց «Լույս»-ի լուսնի սկսած մինչեւ
Բաթումի ամիսները: Ինչպէս խորտակված սր-
տով խոստովանում է Գիւտ քահանայ: Այլ
և կայ այն հանգամանքը, որ Ներսիսեան
գաղղոյի համար տէրտէր հոգաբարձուներ էլ
ընտրվեցին: Այս երեք դէպքերի շուրջն
էլ բոլորված է վայնասունը: Զբ դիտենք Ար-
շակ Տէր-Միքէլեան ինչու է մեղ դէմ լարել
իր աստուածաբանական սպանիչ նետերը. և
չենք էլ հետաքրքրվում թէ ինչու, որովհետեւ
նա մի կատարեալ թիւրիմացութիւն է իր առ-
տուածաբանական ցիլիքոյով: Ինչ և եղեւ.
Գիւտ քահանայ շատ և շատ ջգրվել է, այն-
քան ջգրվել, որ Արիստակէս եպիսկոպոսի դէմ
ամբողջ երկու յօդուած է տպագրել: Զիչո՞ն
ասած, մենք շատ կը ցանկայինք իմանալ թէ
ինչ ևս ուզում ասել այդ երկու յօդուածները.
կարդացինք, դէս չուռ տունը, դէս չուռ տը-
ւինը,—ոչինչ չը դուրս եկաւ: Ինչ-որ ողոր-
մելի ակնարկութիւններ Արիստակէս եպիսկո-
պոսի անձնաւորութեան դէմ, ինչ-որ դառնա-
ցանքներ և բռնութիւն, բռնութիւն... Մի
բան միայն ճիշդ է. յօդուածներից մէկը գրել
է Գարամանը, ուստի եւ դրանից փչում է
այդ արատաւոր գրչին յատուկ դարձահոտու-
թիւնը: Ուրեմն, այդ պարունը չէ փոխվել
գեւ, նրան փոքր ինչ աղմուկիւն չէ հաղոր-
դել նոյն իսկ տէրտէրական այն «Թորքան»,

որի մէջ այժմ նա ապաստան է գտել իր հին
«Կառք» ողբալու համար:

Միակ փոքր է շատէ հասկանալի յօդուածը
Գիւտ քահանային է պատկանում Մենք գո-
ւում ենք այդ բանի համար Գիւտ քահանային
և մի քիչ կը զբաղվենք նրա այդ յօդուածով,
որովհետեւ զգում ենք, որ պարտական ենք
տէրտէրական հրապարակախօսութեան մի նը-
մուշ ներկայացնել մեր ընթերցողներին: «Լու-
մայի» հրատարակիչը այդ յօդուածով եկել է
ապացուցանելու, որ տէրտէր հոգաբարձուները
շատ ցանկալի բաներ են եղել մեր գաղղոյների
համար:

Մենք մեղ թոյլ չենք տալ—ասում է ա-
սում է Աղանեան—Աղբիւս Հովնաթանի ա-
րած այդ կարգադրութիւնը քննադատել իմա-
նալու համար թէ որ աստիճան նպատակա-
յարմար է նոր կարգադրութիւնը և թէ
ինչքան անհամապատասխան և ապարդիւն
էր նախկին կարգադրութիւնը գործունէութե-
ան մեր հոգեւոր գաղղոյներում մանա-
ւանդ ներկայ խիստ փափուկ ժամանակնե-
րում: Բայց մեր պարտքն է պարզել մեր
ընթերցողներին մի գիտաւոր հանգամանք և
հանել նոյա մոլորութիւնից, այն է ակն-
յայտի կացուցանել նոյա առաջ, թէ որ-
քան նոր էր վերահալու Հայրապետի այդ
կարգադրութիւնը:

Փառք տալով Աստուծուն, որ Գիւտ քահա-
նան ներկայ «Կառք» ժամանակում ե-
կել է մեր գաղղոյներից մէկը երջանկացնելու
իր հոգաբարձութեանը, տեսնենք թէ ինչպէս է
նա հանում իր ընթերցողներին «մոլորութիւ-
նից» և ինչպէս է ապացուցանում թէ ներկայ
կարգադրութիւնը նոր չէ: Մատթէոս կաթո-
ղիկոսի հաստատած կանոնադրութեան մէջ առ-
ված է թէ հոգաբարձու կարող են ընտրել «առ-
նանց զանազաններ» զեկեղեցական և զաշ-
խարհական: Այս բանը քաջաշուք է Աղա-
նեան քահանայ, բայց ինչո՞ւ. ո՞վ է ասել թէ
այդպէս չը պիտի լինի: «Մշակ» ամբողջ ժա-
մանակը այդ չէր պահանջում. մենք չէինք ա-
սում թէ չը պէտք է քահանայի և աշխարհա-
կանի մէջ զանազանութիւն ընել, թէ ընտրու-
թիւնները ամբողջովին պէտք է անձնել ժո-
ղովրդին և ոչ թէ առանձին կատար կազմել
քահանայներից: Ուրեմն աւելորդ ժամավաճա-
րութիւն չէ հաստատել այն, ինչ հաստատ և
յայտնի է ամենքին: Բայց Գիւտ քահանայ մի

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՇՈՒՐԱԸ

«Մշակ» շուրջը չը պղտորես, չի պարզվի,
ասում է ժողովրդական իմաստուն առաջը.
այդ պատճառով անցնի յօդուածում («Մշակ»
№ 24, 25) ընդհանուր գծերով ցոյց տալով
մեր հոգեւոր հաստատութիւնների տարօրինակ
ընթացքը, ընթերցողներից ներողութիւն խնդ-
րելով ուզում ենք շարունակել:

Մենք, իբրեւ երկար տարիների թղթակից,
մեր կաշուի վրա շատ ենք փորձել անստորա-
գիւր յօդուածների հետեւանքները. երբ թղթ-
թակցութիւնների մէջ անյայտ գրողը մերկայ-
րել է մի պատկերիւն, անմիջապէս սկսվել է
խուզարկութիւն գտնելու գրողին: Մենք դէմ
չենք այդպիսի խուզարկութեան, եթէ դա կա-
տարվում է մաքուր նպատակով, որոշել անձ-
նաւորութիւնը, նրա վարք ու բարքը, նրա ըն-
թացքը գիտնալու և նրա համեմատ գնահա-
տելու համար հեղինակի գրուածքը: Բայց արի
տես, որ մեզանում ընդհանրապէս փնտրում են
անմաքուր նպատակով ուղղակի կամ անուղղակի
փնտրելու համար, որ ոչ մի դէպքում պատիւ
չէ կարող բերել: Քիչ չէ պատահում, որ կրքից
կուրացած մարդիկ հազար ու մի ինքնուա-
ջիանք են բարուրում, եղբուրները յեղաշը-
ջում և ըստ քանց քայքայում իրանց անստո-
րագիւր յօդուածներում, մոլորեցնելով և խմ-
բագրութեան և՛ ընթերցող հասարակութեան:

Իսկ ինչ մեղ է վերաբերում, կարող ենք ասել,
որ սիրելով այն հաստատութիւնները, որոնց
պատկերներն ենք մերկայացնում, առանց
կանխալ կարծիքների և յետին նպատակնե-
րի, ցանկանում ենք մեր ոյժերի ներքին չափ
նպաստել ընկած պրեստիճ բարձրացնելուն և
նպաստելու գործի կանոնաւորութեան. և երբ
իմանանք, որ ցանկանում են իմանալ յօդուա-
ծագրի ով լինել կամ անմեղ տեղը սրա կամ
նրա օձիքն են բռնել, պատրաստ ենք յայտնել
մեր անունը:

Անցնալ յօդուածում խօսելով ընդհանրապէս
կարգադրութեան և պարտաճանաչութեան
բացակայութեան մասին, այն միտքը յայտնե-
ցինք, որ անհրաժեշտ է որոշ հրահանգ, որոշ
օրէնք իւրաքանչիւր պաշտօնային համար, որ-
պէս զի մի անգամ ընդմիջող վերանայն այն
կամայականութիւնները, որոնք այսօր գործա-
դրվում են իբրեւ օրէնք և տեղի տալիս ամեն
տեսակ գեղծումների և օրինաւորութիւն-
ների:

Մենք առաջարկել ենք երիտասարդ փոխա-
նորդներին ժողովել նույն նիւթ ապագայ օրէնք-
ների համար. այժմ մենք անում ենք երկրորդ
առաջարկութիւնը, որ որքան դժուար է, այն-
քան անհրաժեշտ ու էական է:

Մենք ունենք եկեղեցական կանոններ, հաս-
տատված կաթողիկոսների կանոնական կոնգրա-
նիքով կամ սրբազործված եկեղեցական ժողով-
ներիով, կանոններ, որոնք կարող էին շատ դէպ-
քերում օգտակար լինել, բայց արի տես, որ
սուրբ հայրերը այդ կանոնների ինչ լինելու
մասին այնքան տեղեկութիւն ունեն, որքան
գուցէ ունեն Զինաստանի կանոններից: Մենք
չենք մեղադրում սուրբ հայրերին, որ նրանք

այդքան անտեղեակ են հին եկեղեցական կա-
նոններից, քանի որ մեզանում դրանք մեծ մա-
սամբ ձեռագիր են, իսկ վարդապետական կո-
չում տալու ժամանակ ամենեւին չէ մտածվել
իշխմանում պահանջել ապագայ պաշտօնական-
րից աղբի անցկացնել այդ ձեռագիրները, գոնէ
երեսանց ծանօթանալ մեր նախնիների դրած
կանոնների հետ, որոնք արդի ժողովրդի ուսում-
նաբարձութեան համար էլ անաղին նշանակու-
թիւն կունենան, քանի որ կանոնների ողորդ
մեր ժողովուրդը ինչ բարոյական աստիճանի
վրա էր գտնվում և թէ որքան է առաջադիմել
կամ յետադիմել: Եթէ մեր վարդապետներն ու
եպիսկոպոսները մինչեւ պաշտօնի մտնելը չեն
սովորել, գոնէ այսուհետեւ հարկը ստիպած ժա-
մանակներում աղբի անցկացնել, բայց այդ էլ
անկարող են անել, ինչպէս ասացի, կանոնները
ձեռագիր լինելու պատճառով: Մենք ունենք
տպագրւած թղթեր, վաճառ վ. Բաստամանցի
հրատարակած Միքիթայ Գոյի դատաստանա-
գիրքը, բայց այդ գրքերը մենք շատ քիչ վար-
դապետներն ու եպիսկոպոսներն ձուռ ենք տե-
նել, իսկ օգտվելու... ոչ մէկին:

Ոչ մի առաջնորդարանում, ոչ մի փոխանոր-
դութեան մէջ մենք չենք հանդիպել գրադարա-
նի, ուր կարելի լինէր տեսնել գոնէ իրանց
պաշտօնի վերաբերված գրքեր, մինչդեռ դա
ամենաէական պահանջներից մէկն է. եթէ վար-
դապետը կամ եպիսկոպոսը ուսումնասէր է,
գնում է իր սեփական միջոցներից իրան հե-
տադրեցող գրքերը, որ և հետո ման է ածում
այս ու այն կողմ, իսկ բացարձակ մեծամասնու-
թիւնը... գիրք չունի:

Իշխմանի տպարանի արխիվում ընկած են
մեն քանակութեամբ տպագրւած զանազան եկեղե-
ցական կրօնական գրքեր: Ինչի են պէտք. մի-
թէ չէր կարելի այդ գրքերից կազմակերպել
գրադարաններ առաջնորդներին և յաջորդների
համար և տարեկան որոշ գումար յատկացնել
այդ գրադարանները հարստացնելու յատկապէս
այնպիսի գրքերով, որոնք անհրաժեշտ են պաշ-
տօնային համար: Սրանով ի հարկէ, շատ բան
չի փութվել, բայց պաշտօնական գոնէ ներքն ընկած
ժամանակ կը դիմէ այդ գրքերին:

Իշխմանում մի քանի վարդապետներ, որ-
քան գիտենք, մասնաւորաբար ձեռագիրներով
զբաղվում են. մինչև անգամ մի երկու տարի
առաջ ձեռագրանի աշակերտներն էլ վարակվել
էին «ձեռագրապաւով». ամենքը վաղուց էին
մասնաւորաբար մի որ և է գիրք «ուսումնա-
սիրելու», ինչ հետեւանք ունեցաւ այդ անխնայ
աշխատանքը, չը գիտենք, միայն այսօր քան
յայտնի, որ այդ գի տն ա կ ա ն շ ա ր ա գ ր ու
թ իւ ռ ն ե ր ը մ անցին ձեռագրանի պատերի մէջ
և լոյս աշխարհ գալիք չունեն: Բայց մենք
չենք լսել, որ դրանցից մէկը յատկապէս զբաղ-
վէր մեր եկեղեցական հին կանոններով և լուրջ
կերպով ուսումնասիրէր ու Գոյ Միքիթայի դա-
տաստանագրքի պէս մի աշխատութիւն տար
մեզ: Մի տարի է, որ նորընծայ սարկաւազ
Մեղի-Թանգեանը, լսում ենք, պարագլուխ է
այդ խնդրով, բայց նա ինչ կը տայ, առ այժմ
չենք կարող ասել:

Մենք կը ցանկանայինք ուրեմն տեսնել բո-
լոր եկեղեցական կանոնները տպագրված ամեն
մի առաջնորդի, յաջորդի և գործակալի ձեռ-
քին:

Այդ կանոնները, իբրեւ անցնալ դարերի հայ

ուրիշ խաղաթուղթ էլ ունի ձեռքում: Մատթեոս կաթողիկոսը մի կոնդակ է եղել դրած, որով պատուիրում էր հողաբարձու ընտրել չորս աշխարհական եւ երկու քահանայ: Այս կոնդակը չէ կատարվել. ընտրութիւնները տեղի են ունեցել դպրոցի կանոնադրութեան հիման վրա եւ կաթողիկոսը ինքը անտես անելով իր կոնդակը, հաստատել է ընտրված հողաբարձուներին: Ի՞նչ է դուրս գալիս այս հանգամանքից: Աղանձաբանական ասում է, որ Մատթեոսը «թերեւս առաջիկային թողեց նոր ծրագրի իրադրութեամբ: Բայց սա աշխնչ արժէք չունի եւ ոչ ոք պարտաւոր չէ հաւատալ, թէ Գիւտ քահանան մարգարէական գուշակութիւններ էլ կարող է անել: Փաստը այն է, որ Մատթեոսը, հաստատելով հողաբարձուներին, ինքն է ոչնչացրել իր կարգադրութիւնը եւ դպրոցի կանոնադրութիւնը անփոփոխ է մնացել նոյն իսկ Մակարի պէս կաթողիկոսի օրով: Բայց զննեք թէ հէնց Մատթեոսը ուզում էր երկու քահանաների ընտրութիւնը պարտադիր դարձնել: Արդեօք նա հրամայել է, որ դրանք ընտրութիւնը կատարեն քահանաները ժողովրդից անջատ: Գիւտ քահանան ոչինչ չէ ասում այդ մասին եւ նրա լուծութիւնը շատ պերճախօս է: Մատթեոսը այդպիսի հրաման չէ տուել եւ չէր էլ կարող տալ: Աշխակապուկի խաղաղ գրականութեան մէջ շատ անվայել բան է. Գիւտ քահանան կարծում է թէ կարելի է աչք կապել, ասելով թէ Մատթեոսի ցանկութիւնը իրագործվեց նրանով, որ երկու անգամ Ներսիսեան դպրոցի հողաբարձական կազմի մէջ մտան քահանաներ: Բայց ով էր նրանց ընտրել— ժողովուրդը: Եղել է դէպք, որ քահանաները ժողով կազմեն— Ո՛հ, Ո՛հ, եւ ուզում ջնաջնել, ում էք կարող մարդեցիներ: Այո, դուք այսօր էք վեր կացել եւ Քրիստոսի ժամանակակից դպիրների նման ասում էք. «Ի՞նչ խնայողութիւն կարելի էր դնել աշխարհականի եւ եկեղեցականի մէջ... Ժողովուրդն ու հոգեւորականութիւնը միշտ մի ամբողջութիւն են կազմել: Դուք այդպէս պարտաւոր էիք խօսել այն քահանայական ժողովում, որ ընտրում էր ձեզ. դուք պարտաւոր էիք պահանջել, որ ժողովրդական քուէն ձեզ կանչէ կառավարելու դպրոցը եւ ոչ թէ ձեր կարգակցիների քուէն: Պարտաւոր էիք... Բայց ի՞նչ ենք ասում. դուք այնքան էլ միամիտ չէիք...»

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Փետրվարի 14-ին

Բարեկենդանի նախափորձին օրվայ հետ միասին վերջացաւ մեր քաղաքում հարսանիքների սեզօնը եւ մեծ պարզ այս տարի, բաղդի բերմամբ, շատ վրա հասնելով, վերջ դրեց մեծ մասամբ քառասուն տեսակարանների այն անընդհատ շարքին, որը վերջին մի երկու ամսվայ ըն-

ժողովրդի կեանքին համապատասխան կանօններ, ամբողջովին չեն կարող այսօր գործադրվել, քանի որ հայ ժողովուրդը քաղաքական, մտաւոր եւ բարոյական փոփոխութիւններ է կրել, ուրեմն կանօններն էլ այժմ պիտի դրանց յարմար լինեն: Ահա դրա համար էր, որ անցյալ յօդուածում մենք հրաւիրեցինք փոխանորդներին ժողովել այն բոլոր հարցերը եւ դէպքերը, որոնք այժմ պատահում են կեանքի մէջ եւ ներկայացնել բարձրագոյն իշխանութեան:

Այստեղ, Ալեքսանդրօպօլում, այդպիսի հոմ նիւթ ժողովելու փորձն արված է, թէեւ առ այժմ միայն մի, բայց ամենական հարցի— քահանայական հարցի վերաբերմամբ: Մենք տեսել ենք մեր փոխանորդի մօտ այդ հարցի վերաբերեալ անգին տեղեկութիւններ, որոնք այժմ կարգի են բերվում, դուք չուտով պատրաստ կը լինեն: Եթէ միայն քահանայական հարցը այդպիսի նիւթ է տալիս, հապա միւս հարցերն էլ միասին սրբան կը լինեն. պէտք է այս էլ աւելացնենք, որ որքան ծանօթացանք հաւաքած տեղեկութիւնների հետ, նրանք այժմ բունականում են շատ ու շատ փաստեր, որոնք մինչեւ այժմ ամենեւին ուշադրութեան առնված չեն եղել, ծածուկ են մնացել:

Մենք չենք ուզում օրինակներ բերել քահանայական հարցի վերաբերութեամբ, յուսալով, որ մի օր լոյս աշխարհ կը գնա հաւաքողի ձեռքով, բայց մենք ուզում ենք էլի մասնաշնչալի անել մի քանի խնդիրների վրա:

Օրինակ, որքան երկար զբաղվեց մամուլը մեր երեցիկության խնդրով, ինչպիսի քրտնակա մերկացումներ հրապարակ հանեց երեցիկների կեանքից, բայց մամուլը արձանադրում է միայն խոշոր կենսորոշների եկե-

ղաքում վերաբերում էր փոքր ի շատեւ բաւական զգացմունքով օժտված մարդու սիրտը եւ պղտորում նրա արեւնը:

Հարսանիքներ ասելով, պէտք է երեւակայել, շատ անհայտ բացատրութեամբ, «կենդանի ապրանք» ամենակոպիտ առեւտուր: Կինը, կրթված, դաստիարակված, իրան ինտելիգենտ համարող հայ օրիորդը, արտաբնական Բաֆայէլեան Մադոննային նմանվող կամ Ջիւլիէտտային եւ այլ բոմանտիկական հերոսուհիներին, ինքն ինքն ինքն ու մօզային գրեթե քննարկելի եւ հեղինակներից խօսող սքանչելաւոր նաղելին, ասպարէզ է հանվում իբրեւ մի կենսական մթերք, որն ունի իր որոշ, վաղորօք մասնաների, պապաների, աղիւնների, աքիւնների, դաշինքի եւ ամփնների» ձեռքով նշանակած «մի-նիմալ տակաճառ»: Ում գրապատում գտնվում է այդ կենսական անխուսափելի պահանջներին բաւարարութիւն տուող շփոթ գնելու դրամ, նա տիրանում է նրան այնպիսի հեշտութեամբ, ինչպիսի հեշտութեամբ գնում է քաղաքում ինչպիսի հեշտութեամբ գնում է քաղաքում «թաղ», «թաղաւ» ձեռքով: Բարոյական կապ միասնորդող զուգի մէջ, գաղափարակցութիւն եւ այլ այդպիսի «խելօք մարդկանց խելից հեռու» բաներ չեն պահանջվում. բաւական է փողը, ուրիշ ոչինչ չէ պահանջվում. երբ կայ փող, այն ժամանակ ամեն ինչ կատարեալ է այս անցաւոր աշխարհում...

Քրիստոսի տաճարում պատկերում է մի աղքատ զուգ, մի խելօք բանւոր, չընկալաւոր իրան պէս չունեւոր մարդկանցով: Նա միջոցներ չունի լուսաւորել եկեղեցին, վերջինիս շահերին շոտով-գլխով նուիրված երեցիկներ խնայողութիւնը այնտեղ է հանում, որ անագին տաճարի մէջ վառվում է մի զուգ մօմ միայն: Եւ արդարեւ ինքն ինքն է համարեալ խաւարի մէջ: Եկեղեցու սպասաւորները, տիրացուները, ժամկույր, երեցիկներ, սարկաւազը եւ նոյն իսկ պատկող բռնութեամբ, հայրը ամեն կերպ, առանց որ եւ է պատկառանքի եւ ամօթի, իրանց արհամարհանքն են յայտնում պատկողներին ու նրանց հիւրերին եւ նոյն իսկ վերաւորանքներ են հասցնում խօսքերով ու դուրծով, բռնում են, կոպտութեամբ դէս ու դէն են հրում եւ այլն: Արժանապատեւ «բռնութեամբ» ոչ թէ պատկում է, այլ ուղղակի գլխից ուղղ է անում, մի տեսակ կատակերգութիւն է խաղում, ծէսը ընդմիջում է յաճախ ներկայ եղողների խողովածուն ոչ այնքան դուրեկան խօսքերով, դարձածքներով, կոպիտ նկատողութիւններով, մի խօսքով ամեն կերպ պըտակվող խելօքների եւ նրանց հիւրերի ինքնաբերութիւնները, մարդկային բոլոր արժանաւորութիւնները ոտնակոխ անում:

Վերջանում է պատկի այդ քարադրութիւնը: Նորապաշտները, աղաւթված այդ տանջանքից, ուղղում են իրանց քայլերը դէպի եկեղեցու շէնքը: Այդտեղ խելօքների գլխին կատարվում

ղեցական հաշիւներին վերաբերեալ հարցերը, նա չը գիտէ, չը գիտեն եւ մեր հոգեւոր հայրերն ու պաշտօնեաները, որ այդպիսի զեղծութիւններ ամեն մի գիւղի եկեղեցում են կատարվում, որ եկեղեցական հաշիւմատները մինչեւ տարվայ վերջը մաքուր են լինում, ապա գրվում: Մի գիւղաքաղաքում, յիշում ենք, բարեհազի բեցփոխը ամեն տարի հաշիւ էր տալիս 800 ռուբլի մուտք, 800 ռուբլի 56 կօպէկ մուտք եւ անհանգիստ պարծանքով այդ 56 կօպէկը նուիրում էր եկեղեցուն, բայց այդ երեցիկներին հնազանդիւն եւ նշակակից մի երեւոտաւոր էր 800 ռուբլի մուտքը անմիջապէս դարձաւ 1400 ռուբլի: Մի ուրիշ թեմի բոլոր գիւղերի եկեղեցական հաշիւմատները գրվում էին առաջնորդի քրէի տակ կօնսիտօրիայում, ինչպէս կամենում էին: Երեցիկներ իր պաշտօնավարութեան ժամանակ եկեղեցական փողերը բաժանում է իր բարեկամներին եւ անվաւեր թղթի կտորներ տալիս իր յաջորդին կամ, եթէ ինքը հարուստ է եւ ունի պարտապաններ, որոնցից չը պիտի կարողանայ դիմել կորզել, իր գումարը վերցնում է եկեղեցուց, իսկ մուրհակը պարտապանից առնում է եկեղեցու անունով. ով է հետաքրքրվում, ով է մտածում այդ մասին: Ժողովուրդը, ոչ, մեր ժողովուրդը չը գիտէ իր իրականքի չափը, իսկ հոգեւոր իշխանութիւնը միանգամայն թող է այդ խնդրում. մենք աւելին կասենք. ժողովրդի եւ հոգեւոր իշխանութեան կապը այն աստիճան է խզված, ժողովրդի հաւատը դէպի այդ իշխանութիւնը այնքան է ընկած, որ եկեղեցական դոմարները չեն ցոյց տալիս հոգեւոր իշխանութեան, վախկնալով թէ մի գուցէ նա ինչ այդ փողերը:

Ժողովուրդը նախաւանդ սովորութեամբ

է մի կատարեալ «օյնբաղութիւն». նրանց առաջը կտրում են վերեւ յիշած «քաղաքի» սպասաւորները ու իրանց բաժի «սեւ փողը» պահանջում. հրում են, հայնջում, անպատուում, թշուառում միտմբ բառիս բուն մտքով, արտասանում են այնպիսի խօսքեր, որոնք կարող են մարդու ականջ ծակել... Խելօք նորապաշտները իրանց հիւրերով հանդերձ մի կերպ աղաւթվում են վերջապէս մեր անարդէս «մեծ բոռնցքների» ճանկերից ու գնում միմիկարվելու իրանց աղքատիկ հարսանիքի խնդրում:

Բառուղ ժամից յետոյ նոյն տաճարին մօտեւում է մեր վաղեմի վատահամբաւ ու անուղղելի բարեկամի, փողի տոպրակի, սրտերը քաղապէս դրաւող բազուկի ճարպազգեստ «բիւցազներ» հարսանիքը: Ջահերը խելօք վառվում են: Սպասաւորները դէս ու դէն են ընկնում ու ամեն ինչ կարգի բերում: Բարեկրօն տէր հայրը տօնական զգեստ հագած հանկուտ է նրան եկեղեցու շէնքում ու ինկարկելով տանում ներս: Պատկողներին ուղեկցում է տեղական յորդերի ու լեղիների մի բազմատուար փոճակ: Թաւիշը, բօրբօն, Լիօնի թորիչուրը, թանգազին քարերը ու ոսկեկզոծ ուսնոցները աչքեր են ծակում իրանց կախարհական փայլով: Եկեղեցու սպասաւորները ու մեծաշուք հանդէս տեսնելու համար փողոցից հաւաքված պղծբեկները խորին ակնածութեամբ ու պատկառանքով նայում են պատկողներին ու նրանց ուղեկիցներին վրա, ընկնում ու ոչնչանում են նրանց առաջ ու ոսկեկրեւ մարդիկ հաւաքարկում կատարեալ զրօյն: Սկսվում է պատկի մեծախորհուրդ արարողութիւնը: Այս անգամ նա ճշմարիտ որ մեծախորհուրդ է. ամեն բան գնում է կարգին, ամեն բան կատարվում է ըստ կանոնադրութեան: Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու Փառաւորում է ժամանակակից մեծագոր ոսկեյող կուռքը, որի սիրուն օր ցերեկով այնպիսի անպատկառ կերպով զոհվում են կեանքի մաքուր իղեւները ու որի առաջ, պատիւ, ինքնաբերութիւն ու մարդկային արժանաւորութիւն անուն կրող անասնակի ծանրոյցը մի կողմ չպրտած, սողում են ողորմելի մարդկանց ամբողջ լեզուները:

Ստ. Տէր-Աւետիքեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«КАВКАЗЪ» լրագրում կարդում ենք. «Հայալուսաւորական ս. Գեորգ եկեղեցու շինութեան նախագիծը, որ կազմել են ճարտարապետ Ա. Հայնազարեանց եւ պ. Զուրաբեանց, արժանալի է տեխնիկական կօմիտեի կողմից ստալին պարգեւի: Այդ եկեղեցու հիմնարկութիւնը, որ պիտի շինվի Գօրիսկի պրօպէկտի եւ Դվորցովայա փողոցի անկիւնում, տեւտողի է տալիս Էլմիաճին, մի գեղեցիկ սովորութիւն, որ իրանց մայր Սթոնի պահպանութեան համար բաժին հանում իրանց արդիւնքից: Սակայն փորձեցէ մի քանի տարվայ արդիւնքը համեմատել իրար հետ, կը տեսնէք ահագին տարբերութիւն: Ինչպէս, որովհետեւ նախ ժողովրդի ստեղծած տեղ չէ հասել եւ այդ տեսել է ժողովուրդը. երկրորդ՝ երբ այդ ժողովրդից մէկը կամ միւսը Էլմիաճին է գնացել, ծառաները դուրս են վազել, սեղանի վրայ լինել են կացրել, հացը մերժել են:

Ամուսնական խնդիր է ծագում. իսկ այժմ այդ խնդիրը քահանայական խնդիրն համարող կարեւոր նշանակութիւն ունի: Ատենական տեղերը լիքն են ամուսնական զանազան երազմաթիւ խնդիրներով, բայց այդ խնդիրը դեռ մինչեւ այժմ էլ բաց է մնացել: Ապօրինի կենսակցութիւնների թիւը, որ ամուսնական խնդիր մի ճիւղն է կազմում, հետզհետէ բազմանում է: Մենք փաստեր ունենք, որ ամուսնական խնդիրը 26 տարի ամենական տեղերում ձգձգվում է, մինչդեռ նա առաւել մի տարվայ գործ էր այդ կամ ոչ ասել: Արդեօք հետաքրքրութիւն եղել է մեր սուրբ հայրերի կողմից գտնել այդ շարիքների պատճառը եւ դարձան մտածել: Ո՛չ:

Այսպիսի այրող խնդիրների ու հարցերի ամեն մի քաղաքականում կը հանդիպէք, որքան անյետաձգելի հրահանգներ են պահանջում, բայց տուող չը կայ: Մենք կատարելեք մեր կողմից հետեւեալ միջոցները, որոնք կարող են զիւրութիւն տալ գործի արդ լուծման: Նախ՝ թող կազմակերպվի Էլմիաճինում մի մասնախումբ, որ բոլոր թեմերից պահանջէ այն բոլոր հարցերը, որոնք կան ամուսններում, դասաւորէ, կանօնաւորէ

ղի կուննայ մարտի առաջին թերթին, ամենայն հայոց կաթողիկոսի ներկայութեամբ:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսում կազմակերպվել է արդէն Պետերբուրգի արեւելագիտութեան ընկերութեան բաժանմունքը, որի անդամների թիւը մինչեւ հիմա հասնում է 115-ի: Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը լինելու է առաջիկայ մարտ ամսին:

Մօտ օրերս լոյս տեսաւ «Անդրկովկասեան երկաթուղիների հաշիւը», որ վերաբերում է այդ երկաթուղիների շահագործութեանը 1899 թվականի ընթացքում: Հաշիւը երեւում է, որ անդրկովկասեան երկաթուղիների բոլոր զծերից մուտք է եղել ընդամենը 21,957,798 ռուբլի, որից ծախք է եղել 10,285,321 ռուբլի, ուրեմն 1899 թվին դուռ արդիւնք ստացվել է 10,573,070 ռուբլի:

Կիրակի, ամսին 18-ին, Թիֆլիսի ս. Նիսայի գիշերօթիկ օրիորդաց ուսումնարանում կայացաւ մուգիկայի ինսպեկտոր Լ. Ֆ. Կնիսայի աշակերտների տարեկան երաժշտական երկու կնիս հրաւիրված էին երաժշտական ուսումնարանի դիրեկտոր Կլինովսկի եւ այլ հիւրեր երաժշտական աշխարհից: Նուազեցին չորս դաշնամուրի վրա երկու ձեռքի եւ չորս ձեռքի պիեաներ Մօցարտի, Բէթհօվենի, Բախ-Բինի-կէի, Ծօպէի, Վեբերի, Մենդելսոն-Լիստի եւ Կնիսայի հեղինակութիւններից: Երեւոյն շատ լաւ տպաւորութիւն թողեց հանգիստականների վրա իր լուրջ կօնցէրային ընաւորութեամբ:

Մեզ հաղորդում են, որ կիրակի օր, ամսին 18-ին, Կուկիայի Թանգուհան եկեղեցում, ընդհանուր քուէարկութեամբ երեցիկայ ընտրվեց պ. Խաչատուր Տէր-Մարգարեանց:

Մեզ խնդրում են տպագրել Թիֆլիսի Հայուհեայ Բարեգործական ընկերութեան օգտին՝ 1900 թվ. դեկտեմբերի 17-ին կայացած պահանջագրի հետեւեալ հաշիւը: Մուտք՝ տոմսակների վճարումներ 1,564 ռուբլի 50 կօպէկ, պրէմիա 507 ռ. 87 կ., բուֆէտից ստացվել է 540 ռ. 30 կ., ընդամենը 2,612 ռ. 67 կօպէկ: Ծախք՝ Ժողովարանի դահլիճի վարձ 200 ռ., երաժշտներին 250 ռ., Թատրօնական բալետին 100 ռ., մարկա 83 ռ. 50 կ., տոմսակներ, յայտարարութիւնների եւ այլ տպագրութեան 43 ռ. 32 կ., բուֆէտի ծախք, ծաղիկներին, ծառաներին եւ այլ՝ 97 ռ. 40 կ., ընդամենը 774 ռ. 22 կ.: Զուտ արդիւնք մնում է 1,838 ռուբլի 45 կօպէկ: Մի եւ նոյն ժամանակ վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը Թի. Հ. Մարտիրոսեանին, որ իր վրա էր վերցրել կիսկների շինութիւնը եւ զանիւծների զարդարանքը, «Մշակ» լրագրի խմբագ-

եւ վերածելով ընդհանուր աղիւսակների, չընաբերականով պահանջէ թեմական հաստատութիւններից այդ հարցերի պատասխանը. երբ այդպիսի տեղեկութիւններ ժողովն մի տեղ, ձեռքի տակ ունենալով մեր եկեղեցական բոլոր կանօնները եւ պետական ընդհանուր օրէնքներ, մշակեն կեանքին համապատասխան օրէնքներ եւ ընդհանուր դարձնեն հայրապետական կօն դաւ կօն դաւ կօն: Երկրորդ՝ գտնէ տարին մէկ անգամ անշուշտ պարտաւոր լինեն փոխանորդները առաջնորդներին մօտ, առաջնորդները Էլմիաճին ժողովելով խորհրդակցել այն խնդիրների մասին, որոնք կարող են թիւրթալութիւնների գուռ բանալ:

Պետութիւնը, չը նայելով որ ունի հաստատուն օրէնքներ, չը նայելով որ ամեն մի խընդիր նախատեսված է յատուկ յօդուածով, բայց եւ այնպէս պահանջ է դրում ժողովների, մասնաւոր վարչական գործերի համար եւ դուք տեսնում էք դատաւարները ժողովում են նահանգապետներին մօտ, վերջիններս կառավարչապետի, իսկ սա այդ խորհրդակցութիւնների հետեւանք իր եղբայրացութեամբ աւելի բարձր տեղ է հասցնում. իսկ բարձրագոյն ատենադրանք համեմատելով ընդհանուր օրէնքների ոգուն՝ այս կամ այն վճիռն է կայացնում:

Կրկնում ենք, եթէ հաստատուն օրէնք եղած տեղում այդ պահանջը զգացվում է, մեզ համար եւս առաւել:

Զուգելով յօդուածն աւելի երկարացնել, մենք առ այժմ վերջացնում ենք, խոստանալով, եթէ հարկաւոր կը լինի մանրամասնութիւնների մէջ մտնել, կրկին դառնալ այդ հարցին:

X.

Ալեքսանդրօպօլ.

բութեանը, որ ձրի տպագրելը երկույթի յայտարարութիւնը եւ այն բոլոր անձանց, որոնք իրանց մասնակցութեամբ նպաստեցին երեկոյթի անողութեանը:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Գարնանային պարզ ու չոր եղանակին յաջորդեցին ցուրտ ու խոնավ օրեր: Այսօր, փետրվարի 15-ին, ամբողջ օրը ձիւն է գալիս: Հասարակ ժողովուրդը կարծում է թէ եղանակի փոփոխութիւնը առաջացրեց Յովհաննէս Մկրտչի անը, որ բերվեց քաղաքս Գանձասարից, որպէս զի ձմեռային եղանակներ լինեն եւ այդպիսով հիւանդութիւնները փարազուեն»:

ՍՈՉԻՑԻՑ մեզ գրում են. «Թէեւ նոր տարուց սկսած մեղմանում տաք եւ դարնարային օրեր են առում, բայց յանկարծ, փետրվարի 10-ին, չարաթ օր, կէսօրից սկսվեց միանգամայն ուժգին քամի, անձրեւ եւ ծովում մեծ ալեկոծութիւն: Հեղեղի նման տեղացող անձրեւից քաղաքի մեծ մասում՝ առանց այն էլ մեր ցեխոտ փողոցները ջրով ծածկվեցին, անցնելը համարեա անկարելի եղաւ, իսկ դիշերը ալեկոծութիւնը սաստկացաւ, կարծես ծովը բոլորովին փրփրով ծածկված լինէր: Դեռ ծովեզերքից շատ հեռու ալիքները պատասխում էին անայրն գոգոցոցով: Եւ հետագային միանալով եւ ուրիշների հետ կազմելով անագին, բլրաման, փրփրալից ալիքներ՝ պատասխում էին ծովեզերքում: Մեծ էր նաւատարիների սարսափը, թէ եւ նախատեսելով վտանգը, նաւակները քաշել էին ծովեզերքից հեռու, բայց ուժգին ալիքները հասան նրանց, չորս պարագ նաւակներ մնացին ջրի մէջ, որոնցից երեքը ջախջախվեցին բոլորովին: Աղքատաբար ընկերութեան փայտալէն էժանագին թէյարարներ միջից կէս լինելով քանդվեց, ամբողջ շինութիւնը մի արշինաչափ ալիքներից յետ էր մղվել: Մարդկային զոհեր չը կան. անցեալ ամառ չինված լողարանը նոյնպէս ոչնչացաւ, հետքն անգամ չէ երեւում: Այսպէս մեծ փոթորիկ հաղորդակց է: Հետագային թէյարարներ ստացվում ուրիշ քաղաքներում եղած մնացորդները:

ՎԵՐԻՆ-ԱՂԴԱՆ գիւղից մեզ գրում են. «Ամսիս 10-ին, երեկոյան ժամի 7-ին, Վերին Աղբառի դպրոցի դահլիճում պատրաստված էր տոնածառ. հաւաքված էր երկուսուսի մեծ բազմութիւն: Սահուն եւ գիւրմբունքի լեզուով խօսեց ուսումնարանի կառավարիչ Բ. Յարութիւն: Նախքան ուսման մեծ նշանակութեան նրա կարեւորութեան եւ անհրաժեշտութեան մասին: Աշակերտները եւ աշակերտուհիներն առաջին եւ կարգադրեցին ոտնադրեցին, բարոյական յօդուածներ, թէ հայերեն եւ թէ ռուսերեն, ընդմէջ երգեցողութեամբ: Երգեց սօլօ Բ. Յարութիւննայն «Մայր Արաքսի»: Եղան պարեր եւ եալլի, երգերի խմբի ներդաշնակ երգեցողութեամբ: Վերջը տուտիչը հիւրերին հաշակերտներին եւ աշակերտուհիներին ու հանգիստականներից շատերին ընթերցեց, որից յետոյ բաժանվեցին մրգեղէններ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՍՄԱՆԵՍԻ ԴՊՐՈՑԸ

(Նամակ Թարգից)

Գրական, հասարակական կեանքը չոր կայ պարբեր ժողովուրդի մէջ, չը կան եւ հասարակական եւ այլ հիմնարկութիւններ: Թաւրիզը իր հասարակական կեանքով, նիստ ու կացով, սովորութիւններով եւ տիրող շատ կարգերով մեղմանում է ճիշդ հին ժամանակները: Ամեն մի առաջադիմական քայլ, ամեն մի նորմուծութիւն (եթէ լինում է) հոգեւորականութեան կողմից հազարաւոր արգելքների է հանդիպում եւ իսկոյն խափանվում:

Թաւրիզում կան բազմաթիւ դպրոցներ, ամեն փողոցում կը պատահէ զուր դպրոցի, կը լսէք աշակերտների խառն եւ ընդհանուր ձեւերը, բայց բոլորն էլ գտնվում են հոգեւորականների, մոլլաների ձեռքում, սահմանափակվում են միմիայն կրօնական առարկաներով: Գիտութիւնների, օտար լեզուների եւ այլ կարեւոր առարկաների հոսն անգամ չը կայ: Բոլոր դպրոցներում տիրում են հին, խալիֆայական կարգերը: Ժեմ, մուլլո ու նեղ սենեակ, ուր բազմաթիւ աշակերտներ, մեծ եւ փոքր, խռնված են միմիայն եւ չորացած գետնի վրա: Անա Թաւրիզի պարսից դպրոցների տիրու: Բայց վերջին ժամանակներս Թաւրիզում գտնվել են մի քանի ուսումնասէր եւ զարգացած պարսիկներ, որոնցից ոմանք Եւրոպայումն

են կրթութիւն առել եւ որոնք եւսանդուն կերպով աշխատում են առաջ տանել եւ լաւ հիմքերի վրա դնել կրթութեան գործը, ազատել պարսիկ ժողովուրդը տգիտութեան ճիւղաններից եւ թօթափել հնութեան փոշին: Սրանք մի եւ նոյն ժամանակ վայելում են եւ թաղապետանգ Մահմադ Ալի-Միրզայի աջակցութեանը եւ աշխուրջ հովանաւորութիւնը: Թաղապետանգն էլ ուսումնասէր է իր հօր նման եւ աշխատում է ամեն կերպ աջակցել այդպիսի ձեռնարկութիւնների եւ քաջալերում է:

Անա մօտ երկու տարի է, որ թաղապետանգի լոխմանի (բօխի) ջանքերով Թաւրիզում բացվել է մի դպրոց, որ իր տեսակով բոլորովին տարբերվում է պարսկական դպրոցներից եւ նման է մեր դպրոցներին. ունի նստաբաններ, Դպրոցը հիմնադրի անունով կոչվում է «Լօխմանեան» դպրոց: Այդ բնիկը երկար ժամանակ եղել է Պարիզ, հէնց այնտեղ էլ կրթութիւն է ստացել եւ գիտէ շատ լաւ ֆրանսերէն:

«Լօխմանեան» դպրոցը առ այժմ ունի 6 տարվայ դասընթացը, մօտ 100 աշակերտով: Աւանդվում են պարսիկներն, արաբներն, ռուսներն, ֆրանսերէն լեզուները, թուրքաբանութիւն եւ աշխարհագրութիւն: Աշխարհագրութիւնը եւ թուրքաբանութիւնը անցնում են թէ պարսից եւ ֆրանսիական լեզուներով, այնպէս որ աշակերտները ուսումնից հարցին կարող են պատասխանել եւ՝ ֆրանսերէն եւ՝ պարսկերէն: Կրթութիւնը այդ դպրոցում արագ քայլերով առաջ է գնում. աշակերտները գիտեն մի քանի լեզու եւ բաւական տեղեկութիւն են ստանում թուրքաբանութիւնից եւ աշխարհագրութիւնից, ամբողջ կերպով նկարում են քարտէշներ եւ այլն:

Այդ տիպի դպրոցներ թէ հրանում շատ կան, բայց Թաւրիզի համար դա առաջին օրինակն է: Ինչպէս ամեն մի առաջադիմական քայլ, ամեն մի օգտաւէր ձեռնարկութիւն հալածվում է պարսից հոգեւորականութիւնից եւ խալիֆանվում է Լօխմանեան դպրոցի էլ անողը կերպով հալածվել է եւ հալածվում: Բայց գոնէ առ այժմ կանգուն է եւ պահպանում է իր դպրութիւնը. այդ էլ միայն թաղապետանգի ջանքով, որ իր հովանաւորութեան տակ առնելով, պաշտպանում է հալածանքներից: Եթէ չը լինէր նա, օ, պարսիկ կատաղած եւ մոլիւնանող ամբողջ, մոլլաների առաջնորդութեամբ, քարերով, բլրերով եւ փայտերով կը յարձակվէր դպրոցի վրա եւ քարուքանդ կանէր:

Մօլլաները, ակնյայտից ցոյցը անհասարկ համարելով, սկսել են ուրիշ կերպ արօպազանդա անել դպրոցի դէմ: Նրանք յորդորում, քարոզում են ժողովրդին հեռու մնալ դպրոցից եւ աշակերտներ չուղարկել, որովհետեւ այնտեղ, իրանց կարծիքով, սովորեցնում են այնպիսի առարկաներ եւ մօլլո բաներ, որ պարսիկ երեխաները վերջ ի վերջոյ ոտու կամ ֆրանգ պէտք է դառնան. վերջին ժամանակներս ճիշդ այդ բովանդակութեամբ յայտարարութիւններ էին կայցրել պատերին: Այդ յայտարարութիւնները եւ յորդորները, ի հարկէ, առանց հետեւանքի չեն անցնում, ունենում են եւ իրանց ազդեցութիւնը: Շատ ցաւալի բան. պարզ նրկատվում է, որ քանի գնում աշակերտների թիւը պակասում է: Բայց լօխմանը, իրան համալուծ մի քանի ընկերներով, առանց յուսահատվելու առաջ է տանում իր սկսած օգտաւէտ գործը եւ աշխատում է կրթված եւ հմուտ ուսուցիչներ հրաւիրել, դպրոցը լաւ ու հաստատուն հիմքերի վրա դնել: Նա թիֆլիսից հրաւիրել է ուսուցիչ լեզուի համար մի հմուտ ուսուցիչ, որը մի եւ նոյն ժամանակ պէտք է պարսկի եւ թաղապետանգի հետ:

Դպրոցը արտաքին յարձակումներից պաշտպանելու համար նշանակված են պահպան զինուորներ, որոնք դիշեր ու ցերեկ հսկում են: Լօխմանեան ուսումնարանը ունի եւ իր փոքր ի շատէ կանոնաւոր դրաժարան-ընթերցարան, ուր կարելի է գտնել եւ՝ ռուսերէն ու ֆրանսերէն գրքեր, ունի գեղարվեստ, բացված յատկապէս աշակերտների համար. նա գտնվում է Լօխմանի հակողութեան տակ:

Կրթութեան գործը շատ զբաղեցնում է թաղապետանգի լօխմանին: Թարգիլի բժշկի պահանջները մէկ-մէկ երեւան են զալիւ: Նա, ինչպէս հաստատ իմացանք, գիտել եւ թղտուրութիւն է ստացել Վեհափառ Շահից զինուորական դպրոց բանալ Թաւրիզում, այնպիսի դպրոց, որի նմանները այժմ թէ հրանում կան, ուր պատրաստվում են զինուորական եւ այլ պաշտօնական անձինք: Այդ դպրոցը դեռ չէ բացվել:

Ինչպէս երեւում է, յետաձգվել է յաջորդ ուսումնական տարվան:

Միանգամայն համակրելի եւ օրինակելի ձեռնարկութիւններ... ցանկանում ենք լրուել աշողութիւն յարգելի բժշկին իր ձեռնարկած օգտաւէտ գործում: Ժամանակ է, որ պարսիկ ժողովուրդը եւս թօթափէ հնութեան փոշին եւ տեղ տայ Եւրոպայից եկած լուսաւոր ճանաչալիներին:

Ե. Պարսեղեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«New-York Herald» լրագիրը հաղորդում է, թէ անգլիական պարլամենտի այժմեան նստաշրջանը ազմկալից կը լինի: Բանն այն է, որ իրանգական միացեալ կուսակցութիւնը վճռել է զիմիկ օրստրուկիայի: «Մենք օգուտ կը քաղենք ամեն մի օրինագծից—ասել է «New-York Herald» լրագիր թղթակցին իրանգական կուսակցութեան պարագլուխ Բեդմոնդ եւ անվերջ կը խօսենք, վերաբերվին օրինագծերը արքայական պալատի բեւեմին, թէ մի որ եւ է տրամվայի շինութեան Շտայնդիայում—այդ մի եւ նոյն է: Մենք 80 հոգի ենք. բաժանվելով խմբերի, մենք կը խօսենք փոյն առ փոյն եւ այնպիսի օրստրուկիցա կը կազմակերպենք, որպիսի դեռ ես չէ եղել ոչ մի պարլամենտում: Ինչ միջոցով էլ որ լինի, մենք արդարութիւն եւ իրաւունք ձեռք կը բերենք իրանգիայի համար: Անգլիան շատ երկար ժամանակ միջամտել է մեր գործերին, մենք նրա պարտքի տակը չենք մնաց: Թղթակցի հարցին, թէ դահական ճանդ չէ նախատեսում արդեօք որ եւ է բարենորոգում իրանգիայի համար, Բեդմոնդ պատասխանեց, որ թէպէտ գահական ճառի մէջ յիշված էր անգլիական կառավարութեան մտադրութեան մասին՝ գնելու ազարակները լէնդլորդներից, բայց դա սովորական խորամանկութիւն է: «Մենք այլ եւս չենք թղթ տալ—չարուհակց Բեդմոնդ—թող փէլ ժողովրդի աչքին. մենք կը պահանջենք, որ կառավարութիւնը ստիպէ լէնդլորդներին լիաճառել ազարակները եւ չը թողնէ լիաճառումը լէնդլորդների կամքին: Յամենայն դէպս դուք կարող էք հաւատացած լինել, որ պարլամենտի այժմեան նստաշրջանում իրանգացիները ցոյց կը տան իրանց ոյժը անգլիական կառավարութեանը»:

Պետերսբուրգից հաղորդում են «Daily Mail» լրագիրը, թէ արդէն մի քանի ամիս է, որ Տրանսկապովսկի նկատմամբ է ուղղմամբերը ների ահագին քանակութեան կորուստ զինուորական պահեստներից: Բանից դուրս է գալիս, որ իրանք անգլիացիներն են ծախում բեթոն թիւն ուղղմամբերը, գողանալով պահեստներից: Անկը այդ բանը շատ հեշտ է, որովհետեւ ուղղմամբերը քանակութեամբ ստուգելը պատեւրազմի ժամանակ համարեա անհնար է: Այսուհանդերձ գողութեան մէջ աղողվեց բռնել ինկուս-Բօդ կայարանի կառավարչին: Նրա բնակարանում գտնված են մեծ քանակութեամբ գողացած ուղղմամբերներ եւ բեթոնների հետ առեւտուր անելու գրասենեակ: Անգլիական հասարակութիւնը աստիճան յուզված է այս միջկայուններով, մանաւանդ որ գողութեան մէջ կասկածվում են եւ միւս պահեստների կառավարիչները:

«Լաֆֆանի գործակալութիւնը» հաղորդում է «Morning Post»-ին փետրվարի 13-ին Պեկինում ստացված կայսերական մի հրամանագրի մասին, որի մէջ պատմվում է, թէ Պեկինի ամենա րօպէին կայսրը եւ նրա մայրը վճռել էին ինքնասպանութիւն գործել, չը ցանկանալով տեսնել Պեկինը օտարների ձեռքում: Նրանք արդէն պատրաստվում էին զրկել իրանց կենսից, երբ պալատականները, ներս վազելով սենեակ, խանդաբեցին իրադրոյթից այդ մտադրութիւնը եւ բռնի կերպով դուրս տարան նրանց Պեկինից: Դէնք ամբակումութեան ժամանակ: Սկզբում նրանք ստիպված էին կրել զարհուրելի զրկանքներ, շատ անգամ տանջվելով ցրտից եւ քաղցից: «Իմ մարմինը փշաքայլում է—ասված է հրամանագրի մէջ—երբ յիշում եմ այդ զրկանքները եւ թշուառութիւնները: Եւ այս բոլորի մէջ մեղաւոր եմ միմիայնները, որոնք վատ խորհուրդներ էին տալիս մեզ»:

«Daily News» գրում է, թէ անգլիական պարլամենտը չի արձակվի, բայց եւ այնպէս թաղապետութեան փոփոխութիւնը չափազանց նշանաւոր ենտեսանքներ կունենայ:

Եւրոպական «Nijisseiki» ամսագրում արգաւորված է մի խիստ հետաքրքրական յօդուած «Եւրոպայի համաշխարհային դրութիւնը» վերնագրով, որ պատկանում արտաքին գործերի մինիստր Կատօ Տակակաիի գրչին: Հեղինակը չափազանց յոռետես հայեացքով է նայում գործերի այժմեան դրութեան վրա Եւրոպայում: Նա չէ հաւատում քաղաքակրթված աշխարհի համակարգին անկեղծութեան դէպի Եւրոպայի, որ շատ մեծ դժուարութիւններ պիտի կրէ, մինչեւ որ կարողանայ տեղ գրաւել արեւմտեան պետութիւնների շարքում: Եւրոպայի թւում է հեղինակին դեռ եւս շատ յետ մնացած երկրի, որովհետեւ նրա մէջ երկաթուղիների ընդհանուր երկարութիւնը միայն 3,500 վերստ է, այն ինչ Անգլիայում—23,000 վերստ, մինչդեռ Անգլիայի տարածութիւնը աւելի քիչ է, քան միայն Նիպոն կղզուրը: Եւրոպայի վարկ չունի եւրոպական պետութիւնների մէջ, որ պարզապէս ապացուցվեց 1896 թւին: Երբ

Եւրոպայի փորձեց 57 միլիօն իենի փոխառութիւն անել, ոչ մի պողոտիւն չը գտաւ, այն ինչ Անգլիայի 300 միլիօն իենի փոխառութիւնը հարաւաֆրիկական պատերազմի համար ծածկվեց 13 անգամ աւելի գումարի օտարադրութիւններով:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 փետրվարի

ԼՕՆԴՕՆ: «Daily Chronicle» լրագիրը հաւատացնում է, որ թէեւ Բօտայի անձնատուր լինելը պաշտօնական չէ հաստատվում, հիմք կայ կարծելու, որ նա միայն յետաձգված է, որովհետեւ դեռ չեն աւարտված լանակցութիւնները մի քանի երկրորդական կէտերի վերաբերմամբ: Այդ համոզումը ձեռնարկ է եւ նրանով, որ զինուորական իշխանութիւնները փոխեցին ռազմամթերք հայթայթելու վերաբերեալ մի քանի պայմանագրեր, որոնք կապված էին ի նկատի ունենալով, որ պատերազմը պէտք է շարունակվի:

Հրատարակված է զինուորական բեւեմը 1901 թւի համար. բոլոր ծախսերը հաշուած են 87,915,000 ր., դրանց թւում 58,230,000 ր. պատերազմի համար: Զօրք կարող որոշված է 450,000, մի եւ նոյն ժամանակ մշտական կազմը պէտք է 220,000 լինի, մնացածները երեւում է, որ հարկաւոր են միայն ի նկատի ունենալով դրութիւնը Աֆրիկայի հարաւում եւ Չինաստանում: Խոստացված է, որ այժմեան ոյժերը Աֆրիկայի հարաւում չորս ամիս յետոյ կը սկսեն աստիճանաբար կրճատվել:

Պեկին: Դեպքաների ժողովում դեռ եւս չէ լրացրած պատժի ենթակա մանդարինների ցուցակը: Գննվում էր նոյնպէս դեպքանական թաղ շինելու հարցը, յօդուած Խաղալի արած որոշումը կը ստիպի եւրոպական մաքալին պաշտօնականներին ամրացրած թաղից դուրսն ապրել: Դեպքանները, անշուշտ, այն կարծիքն ունեն, թէ մաքալին վարչութիւնը բուն չի-նական հիմնարկութիւն է եւ այդ պատճառով իրաւունք չունի սեփականութիւն ունենալ դեպքանական թաղում, թէպէտ նրա ձեռքումն են օտարահպատակ կրէդիտորների շահերը: Ձեռնարկական, գերմանական եւ աւստրիական դեպքանները այն կարծիքն են, թէ նոյն իսկ մասնաւոր անձինք եւրոպացիներից իրաւունք չունեն այնտեղ սեփականութիւն ունենալ: Եթէ այդ կարծիքը ընդունվի, բոլոր ոչ զիպոլմանները ստիպված կը լինեն ապրել կասկածաւ եւ թշնամաբար վերաբերվող մի ազգաբնակչութեան մէջ, որ զգրված է դեպքանական թաղի համար լիւրժ ոյժ պատճառով:

ԼՕՆԴՕՆ: «Morning Post» հաղորդում է, որ դերմանական, ֆրանսիական եւ անգլիական հրամանատարները հրաման արձակեցին արշաւանքը շուտափոյթ ուղարկելու պատրաստութիւնը շարունակել, եթէ պալատը նորից դիմադրէ պետութիւնների պահանջներին:

ՇԱՆԳՀԱՅ: Գերմանական Համալուրդ—Ամեն րիկա չողենաւային ընկերութիւնը հիմնեց սեփական բնակչութիւն Հօնգ-Կօնցում, հիմնեց պօստային հաղորդակցութիւն Շանգհայի, Յինտուտի եւ Տեանձինի միջեւ, բայց է անում կանտօն—Հօնգհօնգ—Շանգհայ կանոնաւոր բեյսեր:

ՍՈՓԻԱ: Լուր են հաղորդում, որ մտադրութիւն կայ 50,000 թիւրքաց զօրքեր կենտրոնացնել բօլգարական սահմանի վրա:

ԿՐՕՆԻՑԻԳ: Անգլիական թաղաւորը ձանապարհ ընկաւ Լօնդօն:

ԲԷԼԳԻԱ: Հաւատարմաթղթերը յանձնելու ժամանակ արտասանած ճառի մէջ, ռուսաց դեպքան ասեց, թէ ռուսաց կառավարութիւնը անկեղծ ցանկանում է Սերբիայի խաղաղ ծաղկումը եւ բարօրութիւնը: Թաղաւորը, իր կողմից, յայտնեց իր զգացմունքները դէպի Օդոստափառ Կնքահայրը եւ Խաչեղայրը եւ հաւատացրեց, թէ իր նպատակն է արտակից յարաբերութիւններ հաստատել երկու երկրների միջեւ, ասելով, թէ կարելի է յոյս դնել իր եւ իր կառավարութիւնն ամենամեծ պատրաստակամութեան վրա:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Միացեալ-Նահանգների կառավարութիւնը դիտարկութիւն ունի կրկին պակասեցնել իր զօրքերը Պեկինում եւ համապատասխան հրաման ուղարկեց Չաֆֆին:

ՊեՏԵՐՍԲՈՒՐԳ: Փետրվարի 17-ին, Թաղաւոր կայսրը, Մարիա Ֆեօդօրովնա եւ Ալեքսանդրա Ֆեօդօրովնա Թագուհի կայսրուհիները, Թաղաւորովնա, Մեծ Իշխանուհի Օլգա Ալեքսանդրովնա եւ Մեծ Իշխան Ալեքսանդր Միխայլովիչ Անիշ-

կով պալատի եկեղեցում ընդունեցին ս. Հա-
ղորդութիւնը:

Փետրվարի 17-ին թագաւոր Կայսրը եւ թա-
գուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնա այցե-
լեցին զեղարուեստը խախտուող ընկերութեան
մէջ վաղը բացվող շարժական ցուցանիշները:
Երեկոյեան 9 ժամին ժողովրդական լուսա-
ւորութեան միջնորդի առողջական գրութեան
մասին թիւլման չը հրատարակվեց: Այսօր
պրոֆէսոր Բերգման հետազոտութիւն կատա-
րեց ընտելեան ճառագայթներով, այնպէս
որ երեւաց, որ զնդարը գտնվում է պարանոցի
ողներին ձախ կողմը: Ընդհանուր դրութիւնը
նորին է:

18 փետրվարի

Տեւեռնի. Տաւար առնելու համար երկրի
ներսը գնացած կուզէ եւ Բերգման երկու մաս-
գործներին սպանութեան լուրերը առիթ տուե-
ցին հետախուզելու անհետացածների բնակու-
թեան տեղը: Մինչեւ այժմ հետախուզութիւնը
հետեւանքներ չը տուեց, բայց նա շարունակ-
վում է:

ՊԱՐԻՉ. Լուրէ հանդիսաւոր ունկնդրութեան
ընդունեց գերմանական դեսպան իշխան Բա-
զովինին:

ՊԱՐԻՉ. Ամենաարժանահաւատ աղբիւրներ
վկայում են, որ Մանչուրիայի վերաբերմամբ
օտար մամուլի հաղորդած ուռու-չինական համա-
ձայնութեան բնագիրը դիտմամբ աղաւաղվում է:
Ռուսաստանի ղէմ կառաված յարուցանելու նպա-
տակով. մանաւանդ աչքի է ընկնում իր ակներեւ
անմտութեամբ հեռագիրներում յիշվող յօդուա-
ծը Նիւ-Յորանեան նաւահանգստի վերաբերմամբ:
Եթէ Ռուսաստանը ցանկանար առանձին հա-
մաձայնութեան կայացնել Չինաստանի հետ,
գրա միակ նպատակը կը լինէր իրազեկել իր
գիտաւորութիւնը, այն է վերադարձնել Ման-
չուրիան Չինաստանին եւ որոշել այն պայման-
ները, որոնցով հնարաւոր կը դառնար մաքրել
այդ չրջանը:

ԿԱՊԵՏՏԱՆ. Մինչեւ այժմ այստեղ ժամատախ-
տով հիւանդանայում 50 դէպքեր կային. նրան-
ցից 12 մահով վերջացան. կապտաղաւից դուրս
երկու տեղերում եւս հիւանդութեան մի քանի
դէպքեր են եղել:

ՍԱՐԱՏՈՎ. Գիւղացիների աղատութեան
40-ամեակի օրը յաւերժացնելու համար դու-
ման որոշեց՝ երկու զարկով բանալ անուանելով
նրանց «Յիշատակ 1861 թւի փետրվարի 19-ի»,
միջնորդել գիւղացիներին մարմնական պատժից
ազատելու մասին տեղական առանձին պալ-
մանների համեմատ, յանձնաժողով կազմակեր-
պել մշակելու այն հարցը, թէ ինչպէս պէտք է
արժանաւորապէս տօնել նոյն անցքի 50-ա-
մեակը եւ գրա համար միջոցներ գտնել:

ՊԵՏԵՐԲՈՐԳ. Փետրվարի 16-ին ֆոնդային
բօրսայի բաժանմունքի առաջին խորհրդակցու-
թիւն բանալու ժամանակ, ֆինանսների միջնոր-
դը ճառ արտասանեց, մասնագիտացնելով բօրա-
սային ընթացիկ նշանակութեան վրա եւ սակելով, որ
սխալ կը լինէր ենթադրել, թէ նոր կանոնների
գործադրութիւնը կը փոխէ բօրսային գործերի
գոյութիւն ունեցող ընթացքը եւ արմատակա-
նապէս կը դարձնէ բօրսային ցաւերը: Ան-
կասկած է, որ ընդհանուր դրութեան բար-
ւոյնում միայն եւ արդիւնաբերական մի քանի
ձեռնարկութիւնների մէջ առողջ հոսանք մտցնելը
կարող են փոխել բօրսային կօնիկտուրան. սա-
կային բօրսան, որպէս եւ իւրաքանչիւր հասա-
րակական հիմնարկութիւն, կարօտ է զիսցիւլի-
նայի ծանկալի է, որ նա կանոնաւոր գործէ, որ
նրա ամենօրեայ գործողութիւնները արտափայ-
լեցնէին թիւլեւէներում իսկական պատկերը,
եւ ոչ թէ շահադիտական կամքի պատահական
արտայայտութիւնը: Գնելի խիստ տատանում-
ները կառաված ծնեցրին հասարակութեան մէջ եւ
բօրսան կորցրեց իր հեղինակութիւնը, որ պէտք
է վերականգնել: Հրաւիրելով խորհրդի անդամ-
ներին դէպի համերաշխ գործունէութիւն, ֆի-
նանսների միջնորդը խոստացաւ իր աջակցու-
թիւնը այն ամեն բանում, ինչ որ նպատակ
ունի զարգացնել կանոնաւոր սկզբունքնե-
րի վրա հիմնված բօրսային գործունէութիւնը:

Բիւլլետենի միջնորդ Բօզովիցովի առողջու-
թեան մասին. «Գիշերը համարեա անքուն
անցկացրեց, ժամանակ առ ժամանակ ոչ-կա-
տարելիապէս աղաւ շնչառութեան պատճառով.
մի փոքր թուլութիւն է նկատվում: Տաքու-
թիւնը 37,6 է, զարկերակը 78, չնչոտութիւնը
16. խոլիս մէջ արիւն չը կար, կուլ տալիս զեռ
ցաւ է զգում: Բժիշկների կարծիքով, կարիք
չը կար անյապաղ գնդակը հանելու»:

19 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՐԳ. Փետրվարի 18-ին, Կայսր
Նիկոլայ I-ի եւ Մեծ Իշխան Ալեքսէյ Միխայ-

լովիչի մահվան յիշատակի օրը, Պետրօպաւ-
լովսկի մայր եկեղեցում կատարվեց հոգեհան-
գիստ, որին ներկայ էին, թագուհի Կայսրուհի
Մարիա Ֆեօդորովնա Օդոնտսկայա դստեր հետ,
Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ
Մեծ Իշխանուհի Նիկոլայովնա Մալթիեւսկայա
հետ, Մեծ Իշխաններ Դմիտրի Կոնստանտին-
ովիչ, Միխայիլ Նիկոլայովիչ, Նիկոլայ Միխայ-
լովիչ, Գիօրգի Միխայլովիչ, Ալեքսանդր Մի-
խայլովիչ, Սերգէյ Միխայլովիչ, Իլյինսկի Ալեք-
սանդր Գիօրգիևիչ Բոմանովսկի դուքս Լէյխ-
տենբերգներն:

ՀԵՆՐԻԿՅՈՐՄ. Բարձրագոյն հրամանով
այստեղ կազմված է առանձին յանձնաժողով
անհող գիւղացիների դրութիւնը բարելոյն
հարցի մշակման համար: Թագաւոր Կայսրը բա-
րեհաճեց չնորհել էլի նոր աղբիւրներ՝ երկու մի-
լիօնի ֆոնդը մեծացնելու համար: Բացի դրանից,
մինչեւ յանձնաժողովի գործողութիւնների վեր-
ջանալը, ամենաողորմաճաքար թոյլատրված է
սենատից ընդհանուր նահանգապետի վաւերաց-
մամբ ծախսել ամեն տարի մի առանձին դու-
մար անհողների անյետաձգելի կարիքների հա-
մար. անհողների թիւը մինչեւ յոգնալի գիւղական
ազգաբնակչութեան կէտից շատ աւել է:

Կիւնդ. Հարաւարեւմտեան երկրում ձեռ-
նային ցանքների դրութիւնը բաւարար է հա-
մարվում, չնորհիւ ձիւնի հաստ չերտի: Հացա-
հատիկների չուկայի տրամադրութիւնը անյի-
ւորն է:

ԼՕՆԻՐՈՆ. Էդուարդ Թադաւորը հասաւ փետր-
վարի 18-ին, Երեկոյեան:

ՄԱԴՐԻԴ. Թագուհի ինստակալուհին յանձ-
նեց Վիլյամիւրդէին նոր կարնէտ կազմելը:

Ուրախութիւնը ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ
Հրատարակիչներ թԱՅՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԻՍ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Մշակի» ներկայ համարի հետ ուղարկում
ենք թիֆլիսի մեր բոլոր բաժանորդներին 1)
Պ. Ս. Դօրօմնովի յայտարարութիւնը եւ 2)
Դօմնէր եւ Լէյպցի յայտարարութիւնը:

ՄԵՂՐԱՄՈՄԻ ԹԵՐԹԵՐ

(Մեղուապահների համար)

Յանձն եմ առնում պատրաստել մինչեւ ապ-
րիլի 25-ը, ֆունտը մէկ բուլբուլ, եւ փոխում
եմ թերթերը մոմի հետ: Պատուէր տուողի մո-
մից թերթեր պատրաստելու համար վերցնում
եմ 30 կոպէկ իւրաքանչիւր ֆունտից: Պա-
տուէր տալիս ինչպէս եմ հարցրել չըջանա-
կի չափը: Դիմել՝ Թիֆլիս, Դիդուրէ, Գուրա-
յիսեան փողոց, մեղուապահ Վաթիկ Ալեք-
սանդրովի Սալոն, սեփական տուն, № 17:

1—1

Պետերբուրգի բժշկական վարչութեան թղթ-
աւութեամբ: Մեծ արկղիկը 5 րուբլի, փոք-
րը—3 ր. եւ 1 ր. 50 կ:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

Մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար,
ոչնչացնում է թեփուր Դուրս եւ եկել նաեւ
բուլբուլին նոր միջոց

ՁՈՒՒԿԱԹԸ

Երեւանի քննչութիւն եւ սպիտակութիւն տա-
լու համար, ոչնչացնում է արեւի պատճա-
ռած սեւութիւնը, մուկները, տալիս է կա-
շտիկ քննչութիւն եւ սպիտակութիւն: Այդ
գնեքը չափաւոր են. մեծ արուակը, արկղի-
կի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ.
Մախվում են բոլոր պարֆումերական եւ
զեղաւաճառական խանութներում: Գլխա-
ւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում,
Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակա-
բան № 12. պահեստի բաժանմունքները
գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դե-
զատման ապրանքների վաճառման ընկերու-
թեան խանութում: Երեւանեան հրապարակ
է նրա բաժանմունքում, Միջայլիսեան փո-
ղոց եւ Բազում. նաեւ Միջայլիսեան կամուր-
ջի վրա, Պապովի եւ Արիստակովի զեղաւ-
ներում: Օտարաբաղաճարների պատուէր-
ները կատարվում են անմիջապէս՝ պօստով:
63—100

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԴԵՐՈՂՈՎ
ՅԵԼԻԻԼԵԱՐՆԻՅ
ԲԱՂԴԱԴԻՍԵՐՄ
կը վաճառվի նպատաւոր պայմաններով Ա-
նանովի քարվանսարա, № 48 գրասենեակը:
2—10

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընդհանուր, որ այս
տարվայ փետրվարի 20-ին, ժամի 1-ին, քաղա-
քային վարչութեան մէջ տեղի կունենայ
աճուրդ կապալով տալու քաղաքային մի հո-
ղարածին, 263 քառ. սաժէն տարածութեամբ,
փայտի պահեստի համար: Հողաբաժինը գտն-
վում է 10-րորդ քաղաքամասում, երկաթուղու
մօտ, ուր այժմ գտնվում է Նիկոլայ Օհանէզովի
փայտի պահեստը:
3—3

Հին գ շ ա բ թ ի, փ ե տ ր վ ա բ ի 22-ին

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԻԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՕՆՑԷՐՏԱՅԻՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Յօդուտ Թիֆլիսի աղքատ երեխաների ձրի ճաշարանի կը տրվի

Կ Օ Ն Ց Է Ր Տ

Ե Ր Կ ՈՒ Բ Ա Տ Ա Ն Մ ՈՒ Ն Ք Ո Վ

Մասնակցում են. Տէրեան-Կորգանովա, Մ. Տ. Վասիլիւի, Ե. Գ. Սարաջիւ, Բրօշի-Մու-
գիւնի, Չմիկեան, Մ. Տօյման, Ե. Մ. Միխայլովա, Կապանակով, Ն. Ա. Բլատով:
Կօնցերայից յետոյ կը լինեն պարեր կօտիլօնով: Երեկոյթի սկիզբն է ժամի 8-ին: Տոմ-
սակները ծախվում են երեկոյթի կոտալարչուհի Սուսաննա Միխայլովնա Լալայեանի մօտ
(Головинский, Д. Оксеева) եւ Սուրբանճեանցի երաժշտական գործիչների խանութում (Զրաւ.
площадь), իսկ կօնցերայի երեկոյեան—մուսաբի մօտ:
18—20—22 3—3

ԲԱՂԴԱԴԻՍՍՊԻՏԵԼԻ

Բօժօժի Ցեղաշարունի առողջ սերմ

Շերամապահական կարարանի սպիտակ բանդերօրով «Մեյիք-Մուսսեան» եւ Եսայա-
զարեանց ընկերութիւնը Ազգայնական քննված: Վաճառվում է մատչելի գնով Վեժ-
նիկ նոսրեա Տիւրանցում: Մէլիք-Մուսսեանցի մօտ (№ 33), Խուզաւիչընեանցի եւ Մէլիք-Մա-
րութեանցի մազաղիններում:
1—1

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ս Ի

Լ Ե Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

Հատոր առաջին:—XVI—XVII դար

Գինն է 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԵԿ

Մախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.

Օտարաբաղաճարները դիմում են. Тифлисъ, редакция «Мшакъ».

10—10

Թիֆլիսի Կենտրոնական գրալաճառանոցում

Ծախվում են հետեւեալ նոր գրքերը՝

Լ է Օ, Հայկական տպագրութիւն, ա. հատոր, Թիֆլիս, 1901 թ., գ. 1 ր. 50 կ.
Մ խ ի թ ա Ր Ե Ա Ն Գ Ա, Տաղեր ու խաղեր, չորս բաժանմունքով, Ալեքս. 1900 թ., 60 կ.:
Մ Օ լ ի Ե Ա, Թագող բժիշկի, թատերական, Բազու, 1900 թ., գ. 25 կ.:
Տ ա ղ ա լ ա Ր Ե Ա Ն Ն, Դօկտ, Բառացուցակ արտասանանց ֆրանսերէնէ ի հայ, Բ. տպ. Կ. Պօ-
լիս, 1901 թ., 30 կ.:
Տ է Ր-Գ ա Ր Ր Է Է Լ Ե Ա Ն Գ, Զան., Խորհրդածութիւններ Յիսուս Քրիստոսի չարաբանքների եւ
մահվան մասին, Թիֆլ. 1900 թ. 1 ր.:
Տ է Ր-Գ Ր ի գ Ր Ե Ա Ն Ն, Դամոկլեան սուր, դրամա 8 արար. Բ. տպ. Երեւան 1900 թ. 75 կ.:
Լ է Օ, Մէլիք Աղլիկը (սակաւաթիւ) 1 ր. 30 կ.:
Բ ա Ֆ Ֆ ի Զահրուժար (սակաւաթիւ) գ. 2 ր.:
Ն Ս Տ Լ Կ Ա Ն Գ, գ. 40 կ.:
Դ ի մ լ ՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (Ե.) 5—5

Ն Ո Ր Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Վ Ա Ծ Ը Ն Կ Ե Ր ՈՒ Թ Ի Ի Ն

Գ ՈՒՏՏԷՆԲԷՐԳ

Կամենալով իրագործել իր նպատակը, բաց է անում Տ Պ Ա Ր Ա Ն տ օ ղ ա Ր ա Ն ա-
կ ա Ն, ձ ու լ ա Ր ա Ն ա կ ա Ն եւ կ ա ղ մ ա Ր ա կ ա Ն բաժանմունքներով, 50,000 բուլբի
հիմնական դրամաղլիով, որ բաժանված է 1000 բաժինների, իւրաքանչիւր բաժինը 50-ական
բուլբի: Ընկերութիւնը առաջարկում է երկու սեռի ցանկացողներին նախօրօք գրվել բա-
ժիններ ստանալու համար, փետրվարի 17-ից մինչեւ նոյն ամսի 25-ը, ի. Ս. Տէր-Սարգսեանի
թղթեղէնի խանութում, Դիօրցովայա փողոցի վրա, եւ Բօրակչեւի կօմիսիօներական գրասե-
նակում, Սիւնի փողոցի վրա, Արծրունու քարվանսարայում, № 12:
2—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ Ե ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՃ ԲԱՐՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու
շաբաթ մի անգամ:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս: Մեկնում է
Բաթումից՝ չորեքշաբթի, փետրվարի 28-ին (մարտի 13)՝ չորեքշաբթի ԱՐՄԵՆԻ, կապիտան ՎԵՐԻ:
Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաչից
լետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են օտովրակներից
պակաս գնեցով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անադոլիայէն մէջ, ընդու-
նելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու հա-
մար թող քարհանձնել դիմել ընկերութեան գործակալատարներին:
ԲԱՐՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր ԶԱՐԻՍ, Նաբէրէճայա: ԹիֆլիսՈՒՄ—պ. Օ. Գ. Բարե-
կեղանեանին, Սիւնի փող. Խօջափարուսովի եւ Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱՐՈՒՄ—Եղբ.
Վ. եւ Ի. Մուրաֆեաններին, Նաբէրէճայա փողոց, տուն Կրասնիիովի, № 27: ՆՕՎՈՐՈՍ-
ՆԻՅԱՎ—Վարդկաւաղի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Կ. Ն.) 13—20